Փորձարկման մասնակցի իրավունքների մասին հայտարարագիր

Ցանկացած անձ, որին առաջարկվում է մասնակցել հետազոտական ուսումնասիրության, իրավունք ունի.

1. Տեղեկացված լինել ուսումնասիրության բնույթի և նպատակի մասին:
2. Բացատրություն ստանալ հետազոտական ուսումնասիրության ընթացքում իրականացվող բուժգործողությունների մասին, և տեղեկանալ, թե արդյոք դեղամիջոցներից, սարքերից կամ բուժգործողություններից որևէ մեկը տարբերվում է ստանդարտ պրակտիկայում կիրառվող տարբերակներից:
3. Տեղեկատվություն ստանալ ուսումնասիրության ընթացքում ողջամտորեն սպասելի բոլոր կողմնակի ազդեցությունների, անհարմարությունների կամ ռիսկերի մասին:
4. Տեղեկացված լինել ուսումնասիրությանը մասնակցությունից ողջամտորեն սպասելի բոլոր օգուտների մասին, եթե կիրառելի է:
5. Տեղեկացված լինել հավանականորեն օգտակար ցանկացած այլընտրանքային բուժգործողությունների, դեղամիջոցների կամ սարքերի և դրանց հետ կապված ռիսկերի ու առավելությունների մասին՝ համեմատած առաջարկվող բուժգործողությունների, դեղամիջոցների կամ սարքերի հետ:
6. Տեղեկատվություն ստանալ բուժման տեսակների մասին, եթե կան այդպիսիք, որոնք հասանելի են բարդություններ առաջանալու դեպքում:
7. Հնարավորություն ունենալ հետազոտական ուսումնասիրության հետ կապված ցանկացած հարց տալու՝ ինչպես նախքան մասնակցությանը համաձայնելը, այնպես էլ հետազոտության ընթացքում ցանկացած ժամանակ:
8. Տեղյակ լինել, որ ցանկացած անձ կարող է հրաժարվել մասնակցել հետազոտական ուսումնասիրությանը: Մասնակցությունը կրում է կամավոր բնույթ: Հետազոտության մասնակիցները կարող են հրաժարվել ցանկացած հարցի պատասխանելուց կամ դադարեցնել իրենց մասնակցությունը ցանկացած պահի՝ առանց տույժի կամ օգուտների կորստի, որոնց իրավունքը նրանք այլապես կարող էին ունենալ: Նրանց որոշումը չի ազդի իրենց իրավունքի վրա՝ ստանալու այն բուժխնամքը, որն իրենք կստանային, եթե ընդգրկված չլինեին փորձարկման մեջ:
9. Ստանալ գրավոր համաձայնության ձևի և այս ձևաթղթի ստորագրված և թվագրված պատճենը:
10. Հնարավորություն ունենալ ազատորեն որոշելու համաձայնել կամ չհամաձայնել մասնակցել հետազոտական ուսումնասիրությանը՝ առանց ուժի, հարկադրանքի կամ անհարկի ազդեցության գործադրման:

Եթե հետազոտական ուսումնասիրության հետ կապված որևէ մտահոգություն կամ հարց ունեք, կապվեք համաձայնության ձևի վերևի մասում նշված հետազոտողների հետ:

Եթե չեք կարողանում կապ հաստատել հետազոտական թիմի անդամի հետ և ունեք ընդհանուր հարցեր, կամ մտահոգություններ ու բողոքներ հետազոտական ուսումնասիրության,

հետազոտական թիմի կամ հետազոտության մասնակցի ձեր իրավունքների մասին, խնդրում ենք կապվել.

- UC San Diego Office of IRB Administration՝ irb@ucsd.edu էլ. հասցեով կամ 858-246-4777 հեռախոսահամարով